

ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության
ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի
ասպիրանտ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գիտական հոդվածում քննարկվում են քաղաքացիական հարաբերություններում իրավունքի ինքնապաշտպանության պայմանները: Անդրադարձ է կատարվել իրավունքի ինքնապաշտպանության քաղաքացիաիրավական բովանդակությանը, օրենսդրական դրույթների վերլուծությանը, ինքնապաշտպանության ինստիտուտի քաղաքացիաիրավական ընկալմանը:

Հիմնաբառեր-քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանություն, ինքնապաշտպանության պայմաններ, ինքնապաշտպանության բովանդակություն:

Քաղաքացիական հարաբերություններում իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի կիրառելիության ապահովումը մեծապես պայմանավորում ենք օրենսդրական դրույթների ամբողջականությամբ և հասանելիությամբ: Ինքնապաշտպանության ինստիտուտի իրավական նախադրյալներն ունեն գիտագործնական կարևոր նշանակություն: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քաղաքացիական հարաբերություններում իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի ոչ հստակ և ոչ լիարժեք օրենսդրական ամրագրումը հանգեցնում է ինստիտուտի ոչ ամբողջական ընկալմանն ու կիրառմանը:

Օրինականության պահպանման և ինքնապաշտպանության օրինական սահմանների նշագծման համար հոդվածում քննարկված առարկա ենք դարձնելու քաղաքացիաիրավական ինքնապաշտպանության պայմանները և հատկանիշները՝ անդրադառնալով դրանց իրավաչափությանը և սահմանազանցման դեպքում առաջացող իրավական հետևանքներին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 16-րդ հոդվածը ամրագրում է անձի ինքնապաշտպանության իրավունքը՝ միաժամանակ մատնանշելով նաև դրա համաչափության և խախտման համար անհրաժեշտ գործողությունների սահմաններից դուրս չգալու պահանջը:

Քաղաքացիական օրենսդրության բովանդակությունից բխում է, որ.

- քաղաքացիաիրավական հարաբերություններում, որպես իրավաչափության պարտադիր պայման, խոսվում է նաև այն հանգամանքի մասին, որ ինքնապաշտպանության եղանակները

պետք է համաչափ լինեն իրավունքի խախտմանը և դուրս չգան խափանման համար անհրաժեշտ գործողությունների սահմաններից: Օրենսդրությունը, տալով ինքնապաշտպանության իրավաչափության պայմանը, նպատակ է հետապնդում ապահովել դրա օրինական կիրարկումը: Ինքնապաշտպանության իրավաչափությունը պայմանավորված պետք է լինի նախ և առաջ ինքնապաշտպանվողի իրավաչափ նպատակով: Այն պետք է միտված լինի ոչ թե իրավախախտի իրավունքները խախտելուն, այլ՝ սեփական իրավունքների պաշտպանության իրականացմանն ու օրինական շահերի ապահովմանը: Այսինքն, իրավունքի պաշտպանությունը ոչ թե իրավունքի չարաշահման դրսևորում պետք է լինի, այլ պետք է ուղղված լինի իրավահարաբերությունների բնականոն ընթացքի վերականգնմանը:

- Օրենսգրքի 16-րդ հոդվածի դրույթը մատնանշում է այն սահմանները, որոնք իրավական թույլատրելիության շրջանակներում են. ուղղակիորեն սահմանում է նաև անթույլատրելի և ուրվագծում անօրինական վարքագիծը: Չնայած այն հանգամանքին, որ քաղաքացիական օրենսդրությունը ամրագրում է քաղաքացիական իրավահարաբերություններում ինքնապաշտպանության համաչափության և անհրաժեշտ գործողությունների սահմանների նշաձողը, այն, միևնույն է, ամբողջական չէ: Հոդվածը բացի համաչափության և անհրաժեշտ գործողությունների սահմանների մասին հիշատակումից այլևս որևէ հստակեցում չի պարունակում:

Մայրցամաքային իրավունքի համակարգում, քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության շրջանակների տարալուծված լինելու հանգամանքը մեծապես պայմանավորում ենք

ինքնապաշտպանության իրականացման համար իրավական հիմնավորումների և ձևակերպումների անհրաժեշտության բացակայությամբ: Ներպետական դատական ատյանների սակավաթիվ անդրադարձերը հնարավորություն չեն տալիս վերլուծություն անելու իրավաչափության պայմանների վերաբերյալ, սակայն նույնանման իրավական համակարգեր ունեցող այլ երկրների դատական պրակտիկայի հետ անալոգիա անցկացնելը թույլ է տալիս կատարել որոշակի ընդհանրական դատողություններ²: Այսպիսով, իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի հստակեցման, կենսագործունեության ապահովման համար, կարծում ենք, որ Օրենսգրքում ոչ միայն իրավաչափությունն է պետք որպես պայման ամրագրել, այլ նաև՝ իրավաչափության տեսանելի պայմանները: Մասնավորապես, Օրենսգրքում իրավաչափության պայմաններ կարելի է համարել՝

1. Կոնկրետ խախտման առկայությունը կամ իրավասու անձի համար դրա բարձր հավանականությունը:

2. Այդ իրավախախտման վերացման համար անհրաժեշտ միջոցների կիրառումը, որոնք համահունչ կլինեն իրավախախտման բնույթին:

3. Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանությունն իրավասու են իրականացնել քաղաքացիական իրավունքի սուբյեկտներից, միայն ֆիզիկական անձինք:

Ի տարբերություն վերը շարադրված հետևությունների, որոնք ուղղակիորեն բխում են քաղաքացիական օրենսդրության շարադրանքից, վերջին հետևությունն ունի լրացուցիչ հիմնավորումների կարիք:

Օրենսգրքի 16-րդ հոդվածում օգտագործվող «անձ» եզրույթը որևէ նշում չի պարունակում միայն ֆիզիկական անձանց վերաբերելի լինելու հանգամանքի մասին: Սակայն, քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտի առանձնահատկությունները հաշվի առնելով՝ «անձ» եզրույթը վերագրում ենք բացառապես ֆիզիկական անձանց: Այս հետևությանը հանգում ենք ինչպես տեսական, այնպես էլ՝ դատական պրակտիկայի համակողմանի վերլուծության արդյունքում:

Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության իրականացումը և եղանակների ընտրությունը վերապահված է իրավասու անձին, և օրենսդրությունը, այս առումով, լրացուցիչ կարգավորումներ չի նախատեսում: Տեսական հիմնավորումները թույլ են տալիս հանգել որոշ եզրակացությունների: Մասնավորապես, տեսաբաններ Գրի-

բանովը, Ստրաունինգը, Դենիսովը, Սուխանովը, իրենց աշխատություններում³ անդրադառնալով ինքնապաշտպանության իրականացման եղանակների խնդրին, նշում են, որ քաղաքացիական ինքնապաշտպանության իրականացումը քաղաքացիական իրավունքի այլ ինստիտուտներից տարբերվում է նաև ֆիզիկական ներգործության փաստացի հնարավորությամբ: Որպես ինքնապաշտպանության եղանակներ վառ ապացույց են դիտարկվում անհրաժեշտ պաշտպանությունն ու ծայրահեղ անհրաժեշտությունը: Իրավաբանական անձի կողմից անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության իրականացման նախադրյալները սահմանված չեն, այսինքն՝ իրավաբանական անձի կողմից ձեռնարկված գործողությունները պետք է ունենան ոչ թե փաստացի, այլ՝ իրավական հենք՝ պայմանավորված դրանց իրավական բնույթով: Իսկ անհրաժեշտ պաշտպանության կարևոր հատկանիշներից է հանդիսանում փաստացի գործողությունների կատարումը, որոնք, շատ հաճախ, իրավական հետևանք չեն առաջացնում⁴:

Համակարծիք լինելով հեղինակների այս տեսակետին՝ ցանկանում ենք ավելացնել, որ ինքնապաշտպանությունը օպերատիվ ներգործության և պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներից տարբերվում է նաև իր առավել սահմանափակ սուբյեկտային կազմով: Հետևաբար, իրավաբանական անձանց կողմից իրավունքների պաշտպանությանն ուղղված համանման գործողությունները կատարվում են ոչ թե ինքնապաշտպանության ինստիտուտի, այլ՝ օպերատիվ ներգործության միջոցների շրջանակներում:

Ինքնապաշտպանության ինստիտուտի յուրօրինակ դրսևորումներ առկա են նաև քաղաքացիական օրենսդրության բաղկացուցիչ մասը կազմող հարևանային իրավունքում: Թույլատրելի ազդեցության, վիճելի սահմանի, սահմանակից կառույցների ընդհանուր օգտագործման վերաբերյալ կարգավորումների, և դրանց խախտման դեպքում անձանց համարժեք գործողությունների բնույթին անդրադարձ կատարելու համար անհրաժեշտ են լրացուցիչ ուսումնասիրություններ:

ՀՀ քաղաքացիական օրենսդրության տրամաբանությամբ է կազմված նաև ԱՊՀ երկրների համար նախատեսված մոդելային քաղաքացիական օրենսգիրքը⁵: Այն ևս ամրագրում է ինքնապաշտպանության քաղաքացիաիրավական հնարավորությունը և համանուն վերտառությամբ հոդվածում օգտագործվում է «անձ» եզրույթը: Ըստ էության, հոդվածի բովանդակությունը թույլ չի տալիս հան-

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

գելու նրան, որ խոսքը գնում է բացառապես ֆիզիկական անձանց մասին: Սակայն, իրավագետները, որոնք ուսումնասիրել են քաղաքացիաիրավական հարաբերությունների այս շրջանակը, նշում են, որ ինքնապաշտպանության իրականացման եղանակների ընտրության շրջանակի անկանխատեսելիությունը հենց փաստում է ֆիզիկական անձի կողմից փաստացի գործողություններ ձեռնարկելու հանգամանքը⁶: Կիսելով այս տեսակետը՝ մենք կարծում ենք, որ իրավաբանական անձանց և քաղաքացիաիրավական այլ սուբյեկտների համար, այդ թվում, նաև ֆիզիկական անձանց, քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է այլ իրավական հնարավորություններ իրավունքների խախտումների դեպքերի համար, օրինակ՝ օպերատիվ ներգործության միջոցները: Բացի այդ, ֆիզիկական անձի առանձնահատկություններով պայմանավորված, սահմանվում է նաև իրավաչափ ֆիզիկական ներգործությունը, այն է՝ ինքնապաշտպանությունն իր հնարավոր դրսևորման եղանակներով: Հարկ ենք համարում շեշտել նաև, որ հեղինակներն իրենց աշխատություններում ինքնապաշտպանության մասին խոսելիս օգտագործում են «քաղաքացի» բնորոշումը, ինչը ևս հիմք է տալիս, իրավագիտրեն, կարծելու, որ խոսքը ֆիզիկական անձանց մասին է:

Հարկ է անդրադարձ կատարել նաև պետության և համայնքի կողմից ինքնապաշտպանության կիրառման հնարավորությանը: Գաղտնիք չէ, որ պետությունը քաղաքացիաիրավական հարաբերություններին մասնակցում է այլ սուբյեկտների հետ հավասար իրավունքների և պարտականությունների ծավալով՝ բացառությամբ կոնկրետ սահմանված դեպքերի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի և պետության բացառիկ իրավասությունների շրջանակներում նրանց կողմից ձեռնարկված գործողությունները զուգորդվում են՝ կողմերի համար իրավական հետևանքներ առաջացնելով, կրում են բացառապես իրավական ասպեկտ և չեն կարող զուգորդվել ֆիզիկական փաստացի գործողություններով, ապա ինքնապաշտպանության իրականացման հնարավորությունը կարծես նվազում է: Այսինքն, ինքնապաշտպանության կիրառման տեսական հնարավորությունը հակասության մեջ կլինի պետության (համայնքի) գործառնությունների հետ:

Իրավունքների ինքնապաշտպանությունը հանդիսանում է քաղաքացիական իրավունքների պաշտպանության համակարգի անբաժանելի մաս:

Իրավունքների ինքնապաշտպանությունը ըն-

դունված է դասել ոչ իրավական պաշտպանության ձևերի շարքին⁷: Այս տարանջատումը, թերևս, տրամաբանական կարելի է համարել այն տեսանկյունից, որ ինքնապաշտպանության ձեռնարկումը չի պայմանավորվում որևէ լիազորությամբ օժտված մարմնի համագոր գործողություններից և դրա կատարումը պայմանավորված է բացառապես սուբյեկտի կամահայտությամբ՝ իր սուբյեկտիվ իրավունքներն իրականացնելու նպատակով: Իրավունքի ինքնապաշտպանության կիրառումը որևէ կերպ չի երկրորդում կամ թուլատրելի համարվում խախտումն արձանագրելուց կամ իրավասու մարմնի կողմից կոնկլուզենտ գործողությունների կատարումով: Այն բացառապես ինքնապաշտպանության ակտիվ սուբյեկտի (իրավախախտի) կամարտահայտմամբ պայմանավորված իրավական երևույթ է՝ միտված իրավահարաբերությունների բնականոն ընթացքի, ցանկալի վերջնարդյունքին հասնելու ապահովմանը: Ինքնապաշտպանության փաստացի և իրավական հետևանքների միջև գոյություն ունեցող տարբերությունը և նպատակը ևս հանդիսանում են դրա ոչ իրավական պաշտպանության ձև:

Արարքն ինքնապաշտպանություն որակելու համար անհրաժեշտ է երեք պայմանների միաժամանակյա առկայություն.

1. Ինքնապաշտպանությունն իրականացվում է իրավագոր անձի կողմից: Այսինքն՝ նա հանդիսանում է խախտված իրավունքի կրողը և միայն նա է իրավասու դիմելու ինքնապաշտպանության:

2. Արարքի համաչափությունը խախտված իրավունքի բնույթի հետ կարևորագույն նախապայման է, քանի որ ինքնապաշտպանության բողի ներքո ձեռնարկված ոչ բոլոր գործողություններն են համարվում իրավաչափ: Օրինակ՝ սեփականատիրոջ կողմից իր բազմամյա տնկիների պահպանության համար հրազենի կիրառումը համաչափ համարվել չի կարող¹⁰:

3. Ինքնապաշտպանության սահմանազանցումն անհրաժեշտ երրորդ բաղադրիչն է: Այն ապահովում է ինքնապաշտպանության ինքնանպատակ չլինելու հանգամանքը: Խախտված իրավունքի կրողը պիտի նպատակ ունենա վերականգնելու խախտված իրավունքն ու իրավահարաբերությունների բնականոն ընթացքը. այն չպետք է լինի իրավահարաբերության մյուս մասնակցին վնաս պատճառելու նպատակադրումով¹¹:

Այս երեք նախապայմաններից որևէ մեկի բացակայությունը վերացնում է արարքը իրավունքի ինքնապաշտպանության տիրույթում դիտարկելու փաստը և իրավահարաբերության մյուս սուբյեկտի

մոտ առաջացնում փոխհատուցում պահանջելու և քաղաքացիական իրավունքով նախատեսված այլ միջոցներից օգտվելու հնարավորությունը:

Իրավաբանական գրականության մեջ տարածված է այն կարծիքը, որ քաղաքացիական իրավունքների և օրինական շահերի ինքնապաշտպանությունը՝ լայն իմաստով, կարող են դիտարկել անձի ցանկացած գործողությունները, որոնք ուղղված են նրա իրավունքների պաշտպանությանը: Է. Լ. Ստրաունինգի կարծիքով՝ ինքնապաշտպանության՝ լայն իմաստով, դրսևորում կարող է համարվել քաղաքացիական հարաբերությունների դրսևորած գործողությունների մեծամասնությունը¹²: Օրինակ՝ չափահաս գործունակ անձի կողմից առողջական խնդիրների պատճառով օրինական շահերի և իրավունքների իրականացման նպատակով նրա նկատմամբ սահմանվելիք հոգաբարձությունը կարող է դիտարկվել ինքնապաշտպանության շրջանակներում լայն իմաստով կիրառելիության դեպքում: Տեսաբանն ինքնապաշտպանություն է դիտարկում նաև հայցի ներկայացումը, վարչարարության մարմիններին դիմելը, պայմանագրի կետերի փոփոխությունը, նաև ինքնուրույն իրականացված գործողությունները, որոնց նպատակը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն է:

Եթե առաջնորդվենք վերը նշված հեղինակի հիմնավորումներով ու մոտեցումներով, ապա կբխվենք մի իրավիճակի, երբ քաղաքացիական իրավունքներից հարաբերությունները, եթե ոչ ամբողջական ծավալով, ապա այդ իրավահարաբերությունների մեծ մասը կդիտվի որպես ինքնապաշտպանություն՝ հետևյալ հանգամանքներով պայմանավորված: Քաղաքացիաիրավական հարաբերությունների զերակշիռ մասը ծագում է կամքի ձևավորման և կամարտահայտման հիման վրա: Ինքնապաշտպանության կիրառումը ևս պայմանավորված է կամքի դրսևորմամբ: Քաղաքացիաիրավական հարաբերություններն իրականացվում են իրավունքի սուբյեկտների կողմից, ինչն էլ բնորոշ է քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանությանը: Սակայն, վերը թվարկված ընդհանրությունները, մեր կարծիքով, ոչ թե ամրապնդում են այն տեսակետը, որ ինքնապաշտպանությունը զբաղեցնում է քաղաքացիաիրավական հարաբերությունների սպեկտրը, այլ միայն ամրապնդում են ինքնապաշտպանությունը քաղաքացիական իրավունքի լիարժեք ինստիտուտ լինելու հանգամանքը: Ինքնապաշտպանության տարանջատման, սահմանազատման և հստակեցման համար, կարծում ենք, այլ չափորոշիչներով առաջնորդվելու անհրաժեշտություն

կա: Մասնավորապես՝ ինքնապաշտպանության բացառիկ հատկանիշ ենք դիտարկում այն հանգամանքները, որ.

ա) դրա կիրառելիության համար անհրաժեշտ չէ խախտված իրավունքի ճանաչումը,

բ) ինքնապաշտպանվողի կողմից ձեռնարկվող գործողությունների համար անհրաժեշտ չէ որևէ իրավասու մարմնի ներգրավումը:

Օրենսգրքում ինքնապաշտպանության մատնանշումը և դրա սահմանների նախանշումը, մեր կարծիքով, բավարար չէ: Ի տարբերություն մեր ներպետական օրենսդրության ոչ միանշանակ ամրագրումներին և ոչ բավարար անդրադարձերին, իրավական դոկտրինում ինքնապաշտպանության ինստիտուտի վերաբերյալ դատողություններ առկա են, սակայն միատեսակ մոտեցման բացակայությունն էլ հանգեցնում է իրարամերժ հատկանիշների և բնորոշումների ի հայտ գալուն: Ինքնապաշտպանության նույնականացման համար գիտնականները շատ տարբեր ցուցիչներ են առանձնացրել: Տեսաբաններ Գրիբանովի, Ուսենկոյի, Ռյասենցովի տարանջատած ցուցիչները նույնանում են¹³: Նրանց առանձնացրած չորս հիմնական մոտեցումներից առաջինը իրավահարաբերությունների տարանջատումն է, որի խախտումները վերացնելու կամ կանխելու ուղղությամբ ձեռնարկված գործողությունները կարող են համարվել որպես ինքնապաշտպանություն: Ըստ այդմ, իրավահարաբերության սուբյեկտի կողմից ձեռնարկված գործողությունները, իր խախտված իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելուն ուղղված գործողությունները կարող են դիտարկվել որպես ինքնապաշտպանություն միայն ոչ պայմանագրային հարաբերությունների դեպքում (դեղիկտային պարտավորությունների շրջանակներում¹⁴): Այսպիսով, Գրիբանովն իրավունքների ինքնապաշտպանությունը դիտարկում է իրավասու անձի կողմից օրենքով չարգելված գործողությունների տեսանկյունից: Ավելին, նա մատնանշում է, որ ինքնապաշտպանությունը հիմնված է իրավասու անձի փաստացի գործողությունների վրա՝ անձնական և գույքային իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար:

Ռյասենցովը, կիսելով վերոշարադրյալ տեսակետը, քննարկման առարկա է դարձրել շատ հաճախ անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարված գործողությունների նույնացումը ինքնապաշտպանության ընթացքում ձեռնարկված փաստացի գործողությունների հետ: Սակայն նման նույնացման

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հետ մենք համաձայնել չենք կարող: Անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության վիճակում ձեռնարկված որոշ գործողություններ կարող են դիտարկվել որպես ինքնապաշտպանության դրսևորում՝ որոշ վերապահումներով միայն: Ինքնապաշտպանության դիտանկյունից համադրելի են միայն այն գործողությունները, որոնք ուղղված են սեփական իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանը:

Գոյություն ունեն մեծ թվով հատկանիշներ, որոնք հնարավորություն չեն ընձեռում նույնացնել անհրաժեշտ պաշտպանությունը և ծայրահեղ անհրաժեշտությունն ինքնապաշտպանության ինստիտուտի հետ: Ավելին, այդ ինստիտուտները կապակցված չեն անգամ իրավական հիերարխիայի շրջանակներում: Անհրաժեշտ պաշտպանությունը և ծայրահեղ անհրաժեշտությունը կարելի է համարել ինքնապաշտպանության եղանակներ:

Ստորև թվարկում ենք այն իրավական դրվագները, որոնք, մեր կարծիքով, թույլ են տալիս անհրաժեշտ պաշտպանությունը և ծայրահեղ անհրաժեշտությունը դիտել ինքնապաշտպանության տեսանկյունից՝ դրանց կիրառման նեղ ընկալումներով:

- Իրավունքների ինքնապաշտպանության ընթացքում ձեռնարկված գործողությունները ուղղված են սեփական իրավունքների և օրինական շահերի պահպանմանը: Անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության նպատակով ձեռնարկված գործողությունները կարող են ուղղված լինել ոչ միայն սեփական իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, այլ նաև այլ անձանց իրավունքների և օրինական շահերի, պետության և հասարակության շահերի պաշտպանությանը:

- Անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության վիճակում ձեռնարկված գործողությունները քաղաքացիաիրավական ինքնապաշտպանությունից կարող են տարբերակվել նաև այն հանգամանքով, որ ուղղված են ոչ թե քաղաքացիական իրավունքների այլ, օրինակ՝ աշխատանքային, քաղաքական և այլ իրավունքի ճյուղերի կարգավորումներին¹⁵:

- Իրավունքի իրացմանն ուղղված անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեղ անհրաժեշտության և իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտների կիրառման հիմք է հանդիսանում անձի իրավունքների և օրինական շահերի դեմ ցանկացած ծավալի ոտնձգություն:

- Իրավաչափության բաղադրիչը ևս կարևոր և նույնական է քննարկվող ինստիտուտների դեպ-

քում: Չնայած պետք է նաև նշել, որ անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեղ անհրաժեշտության և իրավունքների ինքնապաշտպանության շրջանակներում սահմանազանցման և ձեռնարկված գործողությունների իրավաչափության պայմանները ծավալային առումով նույնական չեն:

Իրավագիտության մեջ տարածված երկրորդ տեսակետի համաձայն՝ ինքնապաշտպանությունը թույլատրելի է միայն արտապայմանագրային իրավահարաբերությունների դեպքում, իսկ մնացյալ հնարավոր բոլոր խախտումների դեպքում, որոնք կապված են պայմանագրային պարտավորությունների կատարման ընթացքի հետ, օրենսդրությունը նախատեսել է այլ ինստիտուտներ, որոնք գործառույթային տեսանկյունից միտված են ինքնապաշտպանության գործառույթների իրականացմանը¹⁶ (օրինակ՝ պահում, որը ինքնապաշտպանական ֆունկցիա կատարող պաշտպանության միջոց է, սակայն հստակ ամրագրված է Օրենսգրքում):

Հեղինակներ Բրազիլիայի, Կլեյնը, Սելեզյուվը կարծում են, որ ինքնապաշտպանությունը հասանելի է կոնկրետ քաղաքացիական իրավունքների խախտումների դեպքում¹⁷: Ասվածի հիմնավորումներն էլ բերում են հողվածի ձևակերպմանը, որը նույնական է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 16-րդ հոդվածին, մասնավորապես, ինքնապաշտպանության միջոցի ընտրության համաչափությունը:

Մենք չենք կարող ամբողջովին համաձայնվել շարադրված տեսակետի հետ, քանի որ այն առավել նեղ շրջանակներում է դիտարկում իրավունքների ինքնապաշտպանության հնարավորությունը: Կարծում ենք, որ իրավունքների ինքնապաշտպանության իրագործումն օրինաչափ է ցանկացած խախտման պարագայում: Ինքնապաշտպանության իրավաչափության համար բավարար է դրա համաչափ լինելու հանգամանքը և իրավահարաբերության ցանկացած փուլում սուբյեկտներից մեկի կողմից թույլ տրված խախտումը: Վիճելի հանգամանք է նաև իրավունքների խախտումը որպես բացարձակ վավերապայման դիտելը, այսինքն՝ իրավունքի սուբյեկտի մոտ իր իրավունքների, օրինական շահերի խախտման համոզմունքների¹⁸ ձևավորման բավարար լինելը: Որոշ հեղինակներ կարծում են, որ իրավունքի խախտման հանգամանքը պետք է օբյեկտիվորեն գոյություն ունենա, հակառակ դեպքում՝ ձեռնարկված ինքնապաշտպանության էությունը այլևս իրավաչափ չի լինում: Սա ևս վիճելի մոտեցում է: Կարծում ենք, ինքնապաշտպանության համար բավարար պայման է

իրավունքի սուբյեկտի մոտ նման համոզման ձևավորումը: Վերջիվերջո, կամաարտահայտության հիման վրա առաջացած հարաբերության բնականոն ընթացքի, ինչպես նաև ցանկալի վերջնարդյունքին հասնելուն տիրապետում են երկու կողմերն էլ, և խախտման հանգամանքն էլ հասանելի է փոխադարձության սկզբունքով:

Օրենսդրության վերլուծությունից հստակ բխում է, որ ինքնապաշտպանության կիրառումը թույլատրելի և իրավաչափ է քաղաքացիական իրավունքների և օրինական շահերի ցանկացած խախտման կամ ոտնահարման դեպքում: Հետևաբար, տրված սահմանափակ մոտեցումը, ըստ էության, չի արտացոլում քաղաքացիական ինքնապաշտպանության ժամանակակից միտումները:

Կիսելով Ստոյակիցի կարծիքը՝ կարող ենք նշել, որ քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտն օրենքով նախատեսված հնարավորություն է, որը թույլ է տալիս իրավագործ անձին իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված ձեռնարկել համաչափ և իրավաչափ գործողություններ¹⁹: Տեսաբանն օգտագործում է նաև «փաստացի գործողություն» եզրույթը: Փաստացի իրականացվող գործողություններ ասելով՝ տեսաբան Ստոյակիցը նկատի ունի իրավասու անձի կողմից ձեռնարկվող բոլոր գործողությունները, որոնք նպատակաուղղված են սեփական իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանը արտապայմանագրային պարտավորությունների իրականացման ընթացքում: Սահմանագիծը հստակ է, սակայն ամբողջովին համաձայնվել այս տեսակետի հետ կոժվարանանք: Հեղինակն, ըստ էության, քննարկման առարկա է դարձրել իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտը, սակայն այն դիտարկել է բավականին նեղ և միակողմանի հետազոծով: Սա ևս մեկն է այն բազմաթիվ հանգամանքներից, որոնք մեզ թույլ չեն տալիս համաձայնվել շարադրված տեսակետի հետ:

Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության սահմանափակ ընկալման գաղափարը կիրառված է շատ իրավաբան-տեսաբանների մոտ: Այդ մասին են վկայում նաև մեր կատարած ուսումնասիրությունները: Սակայն, մենք կարծում ենք, որ քաղաքացիաիրավական ինքնապաշտպանության ինստիտուտն իր կիրառելիության ոլորտներով առավել ճկուն է և այն դիտարկել բացառապես որպես արտապայմանագրային պարտավորություններից ծագած հարաբերությունների բնականոն շղթան ապահովելու հնարք,

այդքան էլ արդարացի ու ամբողջական չենք համարում:

Յու.Գ.Բասիցի կարծիքով՝ ինքնապաշտպանության իրավական տիրույթում են բոլոր այն միակողմանի գործողությունները, որոնք ուղղված են ապահովելու իրավունքի անձեռնմխելիությունն ու վերացնելու խախտման արդյունքում առաջացած հետևանքը²⁰: Այս մոտեցման հիմնական առանձնահատկությունը կայանում է իրավական հետևանքի ճանաչման մեջ: Տեսակետները փոքր-ինչ տարբերվելով՝ հանգում են այն կետին, որ ինքնապաշտպանության ընթացքում ձեռնարկված գործողությունները, այնուամենայնիվ, փաստացի գոյություն ունեցող վիճակի շտկումն է, որը իրավական տեսանկյունից անհետևանք է մնում իրավահարաբերության համար: Իրավունքների ինքնապաշտպանության շարքին են դասվում ոչ միայն փաստացի կատարվող գործողությունները, այլ նաև այնպիսի գործողություններ, որոնք արդյունք են պետական կամ այլ իրավասու մարմիններին դիմելու: Սակայն, պարտադիր նախապայման է հանդիսանում այն հանգամանքը, որ իրավասու մարմնի կողմից ձեռնարկված գործողությունը հետևանք լինի իրավունքները խախտած անձի դիմումի հիման վրա և իրավահարաբերության ըստ էության քննությունը կամ ուսումնասիրումը տեղի չունենա²¹:

Մենք գտնում ենք, որ տեսաբան Բասիցի բնորոշումը առավել ընդհանրական բնույթ է կրում և չի արտացոլում ինքնապաշտպանության՝ որպես պաշտպանության առանձին ձևի բնութագրիչները: Տրված բնորոշումը առավել ամբողջական դիտարկվում է պաշտպանության ձևերի տեսանկյունից, սակայն դրանց անջատ ուսումնասիրության ընթացքում հստակ արտացոլվում են այն սահմանագատիչները, որոնք պետական իրավասու մարմնի գործողության արդյունքում ներագրում են իրավահարաբերության վրա, և անձի՝ որպես իրավախախտումը կրողի կողմից ձեռնարկված ինքնապաշտպանական գործողությունների բնույթը: Ճիշտ է, պետական կամ այլ իրավասու մարմնին դիմելու գործընթացի շղթայական ուսումնասիրությունը, միգուցե, հանգում է այն եզրակացությանը, որ իրավասու մարմնի կողմից ձեռնարկված գործողությունների նախաձեռնողն ու սկզբնաղբյուրն իրավունքները խախտված անձն է, սակայն ինքնապաշտպանության ինստիտուտի գնահատման համար անհրաժեշտ է շեշտադրումը կատարել ոչ թե ընթացիկ բոլոր փաստերի վրա առանձին-առանձին, այլ իրավահարաբերության վերջնարդյունքին ու նպատակին ուղղված իրավական հետևանքներ առաջացնող գործողությունների

www.ardaradutyjournal.com

վրա: Ուստի, պետական, տեղական կամ այլ իրավասու մարմնին դիմելու արդյունքում իրավունքների պաշտպանությունն իրականացվում է ոչ միայն, և ոչ այնքան, իրավահարաբերության սուբյեկտի կողմից, որքան միջնորդավորված անձանց, մարմինների ձեռնարկած գործողությունների արդյունքում:

Մյուս կողմից, տեսաբան Բասինի կողմից տրված ինքնապաշտպանության բնորոշման և առանձնահատկությունների մեջ շատ կարևոր և իրավունքների ինքնապաշտպանության համար անկյունաքարային հանդիսացող վավերապայմանների մասին ընդհանրապես խոսք չի գնում: Մասնավորապես, քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության ընթացքում թույլ տրված սահմանազանցման, դրա առաջացրած հետևանքների վերաբերյալ: Եթե, հեղինակի կարծիքով ինքնապաշտպանություն է նաև պետական իրավասու մարմնին դիմելու օրենքով ամրագրված հնարավորությունը, ապա, ինքնըստինքյան, բացառվում է ձեռնարկված գործողությունների իրավաչափության կամ սահմանազանցման մասին խոսելը²:

Անփոփելով, քաղաքացիաիրավական հարաբերություններում իրավունքների ինքնապաշտպանության տարբերակումը քաղաքացիական իրավունքի այլ ինստիտուտներից, հանգում ենք հետևյալին, որ՝ ինստիտուտի ընկալումը լիարժեք և ճիշտ ապահովելու համար այն պետք է դիտարկվի նեղ իմաստով՝ հիմք ընդունելով դրա հետևյալ էական հատկանիշները.

1. Քաղաքացիական ինքնապաշտպանության կիրառման հնարավորության վերապահումը

միայն ֆիզիկական անձանց: Այն իրենից ենթադրում է Օրենսգրքի 16-րդ հոդվածում իրավասու անձի մասին ամրագրումը, որը օգտագործված «անձ» եզրույթը վերաբերելի կդարձնի միայն ֆիզիկական անձանց: Քանի որ մայրցամաքային²³ իրավունքի տեսանկյունից ինքնապաշտպանությունը ընկալվում է որպես փաստացի գործողությունների իրականացում, որը ենթադրում է նաև ֆիզիկական ներգործություն: Իրավաբանական անձանց դեպքում ինքնապաշտպանությունը դրսևորվում է օպերատիվ ներգործության միջոցների կիրառմամբ, օրինակ՝ զույթի պահումը:

2. Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության եղանակների համաչափության և անհրաժեշտ սահմաններից դուրս չզալու ողջամիտ և ընկալելի պայմանները պետք է սահմանվեն օրենքով: Դրանք կնպաստեն ինքնապաշտպանության իրավունքի ինստիտուտի կիրարկման ընդլայնմանը: Միաժամանակ, իրավունքների ինքնապաշտպանության քաղաքացիաիրավական ինստիտուտը ուսումնասիրելիս՝ կարծում ենք, պետք է խուսափել դրա լայն իմաստով մեկնաբանություններից և զերծ մնալ ինքնապաշտպանության ինստիտուտի վերլուծությունից, և այն պայմանավորել միայն կամքի ազատ արտահայտման հանգամանքով: Պետք է կիրառել այլ տեսանկյունի բնութագրիչներ, որոնցից շատերը քննարկման առարկա են դարձրել աշխատանքի շրջանակներում:

¹ Այսուհետ՝ Օրենսգիրք, ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

² Տե՛ս, Григоров Алексей Александрович Система самозащиты, научная статья, Вестник Московского университета, серия 14, 2015г.

³ Տե՛ս, В.П. Грибанов, В.А. Рясенцев, М.С. Кораблева Осуществление и защита гражданских прав, 1986, С. 213.

⁴ Տե՛ս, նույն տեղում:

⁵ Տե՛ս, “Модельный Гражданский кодекс для государств - участников СНГ”, www.online.zakon.kz

⁶ Տե՛ս, Григоров Алексей Александрович, Система самозащиты, научная статья, Вестник Московского университета, серия 14, 2015г., И.И. Макаров, Развитие института самозащиты гражданских прав, 2015г.

⁷ Տե՛ս, Е. Л. Страунинг, Самозащита гражданских прав, монография, 1999 г., С. 167.

⁸ Ցանկանում ենք նշել, որ «ոչ իրավական» եզրույթն օգտագործվում է որոշակի վերապահումներով՝ հաշվի առնելով լեզվամտածողության մեջ առկա տարբերությունները: «Ոչ իրավական» եզրույթը կիրառվել է որպես “не правовое” եզրույթի համարժեք թարգմանություն: Այս եզրույթն իրենից ներկայացնում է ոչ թե երևույթի օրենքի կարգավորման դաշտից դուրս գտնվելու հանգամանքը, այլ՝ օրենսդրական ամրագրումների մակարդակը: Կարծում ենք, որ քաղաքացիական իրավունքի տեսության շրջանակներում պաշտպանության ձևերի

տարանջատումը իրավականի և ոչ իրավականի պայմանավորված է միայն մեկ հանգամանքով, այն է՝ օրենսդրական մակարդակում և պաշտպանության ձևի կիրառելիության դեպքում որքա՞ն է պետական իրավասու մարմինների ներգրավվածության, մասնակցության գործոնը:

⁹ Տե՛ս, В. П. Грибанов Пределы осуществления и защиты гражданских прав, М., 2004 г.

¹⁰ Տե՛ս, նույն տեղում:

¹¹ Տե՛ս, նույն տեղում:

¹² Տե՛ս, Страунинг Е. Л. Самозащита гражданских прав, монография, 1999 г., С.167.

¹³ Տե՛ս, В.П. Грибанов, В.А. Рясенцев, М.С. Кораблева Осуществление и защита гражданских прав, 1986 г., С. 216.

¹⁴ Տե՛ս, В.П. Грибанов Пределы осуществления и защита гражданских прав, 2001 г., С. 47.

¹⁵ Տե՛ս, В.П. Грибанов, В.А. Рясенцев, М.С. Кораблева Осуществление и защита гражданских прав, 1986г., С. 215.

¹⁶ Տե՛ս, М. Селезнев Самозащита гражданских прав, научная статья, Вестник Московского университета, 1995г., С.

36.

¹⁷ Տե՛ս, նույն տեղում:

¹⁸ Տե՛ս, В.П. Грибанов, В.А. Рясенцев, М.С. Кораблева Осуществление и защита гражданских прав, 1986 г., С. 217.

¹⁹ Տե՛ս, Г. Я. Стоякин Меры Защиты в гражданском праве, 1973г., М., С. 82.

²⁰ Տե՛ս, նույն տեղում:

²¹ Տե՛ս, նույն տեղում:

²² Պետական իրավասու մարմնի որոշումների արդյունքում ձեռնարկված գործողությունների իրավաչափության վիճարկման հնարավորությունները խիստ սահմանափակ են և հնարավոր միջոցների թվին են դասվում վերադասության կարգով բողոքարկումը և դատական ատյաններին դիմելը: Նշված ինստիտուտների քննարկումից զերծ կմնանք՝ հաշվի առնելով դրանց վերաբերելիության հարցը:

²³ Ընդհանուր իրավունքի հայեցակարգում ինքնապաշտպանության (self-help) ինստիտուտի կիրառելիությունը զարգացել է պայմանագրային իրավունքի շրջանակներում: Այն, մասնավորապես, ենթադրում է պայմանագրային իրավունքի ազատության շրջանակներում ամրագրված գործողությունների համալիր, որոնք կարող են ձեռնարկվել պայմանագրի սուբյեկտների կողմից պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար: Անգլոսաքսոնական իրավունքի համակարգում իրավունքի ինքնապաշտպանության էությանը առանձին անդրադարձել ենք մեկ այլ աշխատության շրջանակներում:

Օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՀՊՏ 1998.08.10/17(50).
2. Модельный Гражданский кодекс для государств – участников СНГ.
3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Տ. Կ. Բարսեղյան, դասագիրք, առաջին մաս (երրորդ հրատարակչություն), ԵՊՀ, 2006թ., 560 էջ:
4. Система самозащиты Григоров Алексей Александрович, научная статья, Вестник Московского университета, серия 14, 2015.
5. Осуществление и защита гражданских прав В.П. Грибанов, В.А. Рясенцев, М.С. Кораблев, учебник, Москва, 2002.
6. Развитие института самозащиты гражданских прав, монография, И.И Макаров, 2015.
7. Самозащита гражданских прав Е. Л. Стаунинг, 170 стр,1999.
8. Пределы осуществления и защита гражданских прав В.П. Грибанов, 2001.
9. Самозащита гражданских прав М. Селезнев, научная статья Вестник Московского университет, М., 1995.

Աննա Մկրտչյան

Аспирант кафедры гражданского права юридического факультета Ереванского государственного университета

РЕЗЮМЕ

Условия самозащиты в гражданском праве

В научной статье дан анализ условий самозащиты прав. Институт самозащиты прав как один из институтов гражданского права имеет необходимые условия для законности. В статье изучены условия законности самозащиты права и даны предложения по усовершенствованию законодательства.

Ключевые слова: самозащита права в гражданском праве, институт самозащиты прав, законодательство самозащиты прав.

Anna Mkrtchyan

PhD student in the chair of civil law of law faculty of Yerevan state university

SUMMARY

Conditions of self-protection of law in civil law

The article is devoted to the institute of self-protection of rights in civil law (private law). The necessary conditions of acts committed during the self-protection of rights were analyzed. The article also highlights the current legislation and makes proposals for improving the legislation.

Key words: self-protection of rights in civil law, legislation on self-protection of rights, self-protection of rights in private law.

Բնագիրը ներկայացվել է 01.07.2019թ.

Ընդունվել է տպագրության 09.07.2019թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Հովհաննիսյանը